

Ե. Ա. ՄԿՐՏԶՅԱՆ

ԲՈՒՐԴՈՒՐԻ ԲԱՐԲԱՌԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բուրդուրի բարբառը հայերենի քիչ հայտնի և դեռևս դիտական ուսումնասիրության չենթարկված բարբառներից մեկն է:

Այս բարբառը հայերենի շուրջ երեք տասնյակի հասնող այն բարբառներից է, որոնք ձևավորվեցին բուն Հայաստանի սահմաններից դուրս՝ վերջին հարյուրամյակներում:

Բուրդուրի հայ գաղութը գտնվում էր Փոքր Ասիա թերակղզու հարավ-արևմուտքյան մասում՝ Բուրդուր լճի արևելյան ափին: Այն հիմնադրվել է մոտ 1610 թվականին՝ Շահ-Աբասի բռնադաշտից խույս տված ղարաբաղցիների կողմից: Նման ղարաբաղյան գաղութների թիվը Արևմտյան Անատոլիայում տասից ավելի է եղել, ինչպես, օրինակ՝ Սփարթա, Դենիզլի, Նազիլի, Օդեմիշ, Անթալյա, Բուլու, Դուզլե, Դօվրէկ, Զոնգուդաղ և այլն: Թեև այս գաղութների բարբառների ընդհանուր երանգը Սյունիք-ղարաբաղյանն է մնացել, սակայն հնչյունաբանական կամ ձևաբանական օրինաչափություններով համեմատության շատ եզրերում միմյանցից տարբերվում են: 1915 թ. եղեռնին զոհ դարձած այդ գաղութներից բավարար թվով բարբառախոսներ չգտնելու պատճառով մենք բավարարվել ենք միայն Բուրդուրի բարբառի նկարագիրը տալով:

Բուրդուրի բարբառը նոր միջավայրում կրել է կր ճյուղի բարբառների ազդեցությունը, որն արտացոլված է թե՛ նրա հնչյունաբանության, թե՛ ձևաբանության, և թե՛ բառապաշարի մեջ: Բուրդուրի բարբառը զգալի ազդեցություն է կրել նաև իր միջավայրի պաշտոնական-պետական լեզվից՝ թուրքերենից:

Բուրդուրի բարբառը իր ծառայությունները կարող է մատուցել նոր բարբառների գոյացության, բարբառների փոխադարձ ազդեցության և ընդհանրապես հայոց լեզվի պատմության շատ հարցեր պարզաբանելիս:

Ստորև տալիս ենք նրա համառոտ ձևաբանությունը:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Գոյականների թիվը: Բուրդուրի բարբառում գոյականներն ունեն միայն եզակի և հոգնակի թիվ: Բուրդուրի բարբառի հոգնակերտներն են՝ նի, էր, նէր, 1, էնի (անք, օնք, ունք, ընք):

Միավանկ բառերի հոգնակին կազմվում է ընդհանուր հայերենի նման էր մասնիկի միջոցով. օրինակ՝ թել>թէլ-թէլէր, հաց>հաց-հացէր, միս>միս-միսէր, լոյս>լիս-լիսէր, ջուր>ճուր-ճիրէր, սիրտ>սըրտ-սըրտէր, տուն>տուն-տընէր, ուս>ուս-ուսէր, քիթ>քնթ-քընթէր և այլն:

Մանոթություն: Ու ձայնավորով վերջավորվող միավանկ բառերի հոգնակին նույնպես կազմվում է էր մասնիկի օգնությամբ, սակայն արմատական ու-ի և հոգնակերտ էր-ի միջև հորանջը ծածկելու համար ավելացվում է վ- շփականը, կամ յ ձայնորգը: Օրինակ՝ ձու>ծու-ծույէր կամ ծուվէր (կա և ծըվէր)։ լու>լույէր կամ լուվէր:

Գրաբարյան հավելվածական և ունեցող մեկուկես վանկանի բառերի հոգնակին կազմելիս և-ն վերականգնվում է. օրինակ՝ թօռն>թօռ-թօրնէր (կա և թօրնանք, թօրնօրանք ձևերը), կուռն>կուռ-կըրնէր, նուռն>նուռ-նըրնէր, մուկն>մուկ>մըկնէր, գառն>կ'էր-կ'էրնէր «ոչխար» (կա և կ'էրնանք, կ'էր-նօրանք ձևերը), մատն>մատ-մաննէր, ոտն>վօղ-վօննէր և այլն:

Մանոթություն: Արմատական ա վանկարարն ունեցող մի քանի մեկուկես վանկանի բառեր շեղվում են այս օրենքից, և հոգնակի են կազմում իբրև միավանկ բառեր, օրինակ՝ ափն>ափ-ափէր, «ձեռքի ափ», գաղձն>դախց-դախցէր, հարսն>հարս-հարսէր և այլն:

Բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է հավասարապես նի և նէր մասնիկներով. ըստ որում երբեմն նախապատվություն է տրվում նի հոգնակերտին, որն զգացվում է հատկապես փոխառությունների հոգնակին կազմելիս, օրինակ՝ աման>աման-ամաննի կամ ամաննէր, ականջ>էնզուջ-էնզուջնի կամ էնզուջնէր, բերան>պէրէն-պէրէննի կամ պէրէննէր, դանակ>տէնէկ-տէնէկնի կամ տէնէկնէր:

Գերազանցապես նի-ով է կազմվում նաև փոխառյալ բառերի հոգնակին. օրինակ՝ վափօր-վափօրնի «շոգենավ կամ շոգեբարձ», ջիզմէ-ջիզմէնի «երկարաճիտներ», ղօփուլ-ղօփուլնի «կողպեք» և այլն:

ի, ա(այ) ձայնավորներով վերջավորվող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է ք հոգնակերտով, օրինակ՝

ի-ով. այգի>իքի-իքիք, բանալի>պիլէնի-պիլէնիք, գինի>կ'ինի-կ'ինիք, հողի>ֆօքի-ֆօքիք, մատանի>մաննի-մաննիք (կամ մըտանի-մըտանիք), քամի>քամի-քամիք, ոսկի>վօսկի-վօսկիք, տարի>տարի-տարիք:

Մանոթություն: ա(այ) ձայնավորով վերջավորվող բառերի հոգնակին նույնպես կազմվում է ք մասնիկով, սակայն ք մասնիկից առաջ հանդիպող այ>է հնչյունափոխության պատճառով թվում է, թե հոգնակերտը ոչ թե ք-ն է, այլ՝ էֆ-ը:

Այս տեսին հայ բարբառների մեծ երախտավոր Հ. Աճառյանն ասում է.

«Մինչև այսօր Երևանի բարբառում բառավերջի այ թեև հնչում է ա (օր. տղայ>տըղա), բայց հենց որ ընկավ բաղաձայնի մոտ դառնում է է այսպես՝ որոշիչ հոդ ստանալու դեպքում. օրինակ՝ էրէխէն երէխայն, տըղէն տղայն»։ Նույն օրենքը գործուն է նաև բուրդուրի բարբառում. օրինակ՝ բակ լայ-բակ լայք պէկլէք, երեխայ-երեխայք ըրիսէք, ըխէք, սատանայ-սատանայք սըտանէք, տղայ-տղայք տըղէք, փեսայ-փեսայք փէսէք:

Մանոթություն: Բուրդուրի բարբառում այնքան մեծ է հոգնակերտների մի-օրինականացման ձգտումը և նի հոգնակերտի տիրապետող ուժը, որ այլ ձևերը գիտակցվելով իբրև ուղիղ ձևեր, կրկնակիորեն ստանում են նի մասնիկը. օրինակ՝ տղայ-տղայք>տըղէք-տըղէքնի, փեսայք>փէսէքն-փէսէքնի և այլն: Կամ ուղղակի՝ տղայք>տըղէնի, փեսայք>փէսէնի և այլն:

Բազմավանկ բառերից մի քանիսը, որոնք ու ձայնավորով են վերջավորվում, շունեն իրենց կայուն հոգնակերտը. նրանք կարող են հանդես գալ գրեթե այս բարբառին հայտնի բոլոր հոգնակիներով: Սա ապացույց է այն բանի, որ

համաբանությունը տարածվել է նաև ու վերջավորությունն ունեցող բառերի վրա ևս: Օրինակ՝ առու>արվէնի, արվընէր, արվընէք, առունի, լեզու>լիզվէնի, լիզուք, լիզվընէր, լիզունի, կատու>կատվընէր, կատուք, կատվէնի և այլն:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐ

Իբրև հավաքականություն ցույց տվող հոգնակերտ հանգես է գալիս էնք կամ անք մասնիկը, օրինակ՝ Հաջի Ակօք>հաջակօփէնք, հաջակօփանք, Մարիամ>մարյանէնք, կամ՝ մարյանանք, Հայրապետ>հափէտանք կամ՝ հափէտէնք և այլն:

Մանրություն: էնք, անք հավաքական հոգնակերտը կրկնակիորեն դրվում է արգեն հոգնակերտ ստացած բառերի վրա՝ ընդգծելու համար հոգնակի առարկաների առանձին խմբերից բաղկացած լինելը, օրինակ՝ Քիվօրանքըս յէկան «քրոջս կողմի բարեկամները եկան»:

Մարդ բառի հոգնակին կազմվում է ընդհանուր հայերենի նման: Մարդ>մարթ-մարթիք, իսկ կին բառի հոգնակին լինում է այսպես՝ կրնանքք, այսինքն՝ ստանում է կրկնակի հոգնակերտ՝ անի+ք (կամ կրնրգնի, մարթիքնր ձևի համաբանությամբ):

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԻ

Բուրգուրի բարբառում հոգնակի իմաստը դրսևորվում է նաև նկարագրական եղանակով: Նկարագրական եղանակը ակադեմիկոս Հ. Աճառյանի վկայությամբ կապված է լեզուների նախնական շրջանի հետ. «թիվ կամ շատություն ցույց տվող որևէ բառի հարադրությունը գոյականի հետ բավական էր հոգնակի գաղափարը արտահայտելու համար»:

Սակայն այս ձևը գերադասված ու նախասիրելի է այս բարբառում գոյականի անորոշ առման դեպքում: Իբրև քանակություն ցույց տվող բառ հանդես է գալիս գոյականից առաջ մինկիտէք<մի(ն)+կուտակ «մի կույտ» բառը. օրինակ՝ Հէզիս մասումը մինկիտէք խընծօր ա տիրել կամ Հէզիս մասումը խընծօրնի ա տիրէլ «մայրս սեղանին խնծորներ է դրել»: Մէր կատուն մինկիտէք ծէք ա պիրէլ: Կամ՝ մէր կատուն ծէքէր ա պիրէլ: «Մեր կատուն ձագեր է բերել»: Հաքրըրս մինկիտէք ծաղիկ ա զարգել: «Հորաքույրս ծաղիկներ է ուղարկել»:

ՀՈՂՈՎՆԵՐ ՈՒ ՀՈՂՈՎՈՒՄՆԵՐ

Ինչպես ում ճյուղի մյուս բարբառներում, այնպես էլ Բուրգուրի բարբառում, հոլովների թիվը յոթն է, այսինքն՝ առկա է նաև ներգոյական հոլովը:

Որոշյալ առման դեպքում գոյականների սեռական հոլովը նույնպես հոգ է ստանում, որով վերանում է սեռականի և տրականի տարբերությունը (Այդպես է նաև հայերենի մի շարք բարբառներում՝ Ղարաբաղի, Ագուլիսի, Կարնո, Ուլեդիայի, Մալաթիայի, Մեղրու և այլն): Օրինակ՝ էս տանձըն ծառն ա սսա տանձի ծառն է»:

Քարը դիպավ տանձրն «քարը դիպավ տանձին»:

Հայցական հոլովը տարբերում է իրի և անձի առումները:

Բացառական հոլովը ունի երկու ձև՝ պարզ և բաղադրյալ: Պարզ բացառականը ունենում է էն (թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում), անալիտիկ բացառականը կազմվում է որոշյալ սեռականից կամ տրականից անկ մասնիկի հարադրությամբ:

Օրինակ՝ Մառն խրնժօրնին վէր րնկան «ծառից խնժորները ցած րնկան»:
Լեյսպիսով, որոշ հոլովումների որոշյալ սեռականը, տրականը, բացառականն ու ներգոյականը, չհաշված բաղադրյալ ձևերը, նման են. ահա մի նմուշ՝ «ը» հոլովման գոյականներից.

Եզակի		Հոգնակի
ուղղական	հացը	հացերը
սեռական	հացըն	հացերուն
տրական	հացըն	հացերուն
հայցական	հացը	հացերը
բացառական	հացըն անէ կամ հացէն	հացերէն
գործիական	հացօմ	հացերօմ
ներգոյական	հացըն մէջ կամ հացումը	հացերմ կամ հացերում հացերուն մէջ:

«ը» հոլովման պատկանող գոյականների եզակի թվի անորոշ սեռականն ու որոշյալ ուղղականը ձևով նույնն են, միայն զանազանվում են նախադասութեան մեջ. օրինակ՝ հացը ճօթը «հացի կտորը»:

Բուրդուրի բարբառն ունի 7 հոլովիչ, հետևաբար նաև 7 հոլովում ի (ը), ու, օշ, օր, վա, ան, ց:

Փաստորեն օշ, օր, վա, և ան հոլովումները գործածությունից դուրս են մղվել և այդ հոլովման պատկանող մի քանի գոյականներ են միայն մնացել (օշ՝ 4 բառ, օր՝ 4 բառ, վա՝ 15 բառ, ան՝ 10 բառ):

Առաջին ի հոլովումն ունի երկու տարբերակ՝ ի և երբեմն՝ ը, որն արդյունք է ի ձայնավորի, կարճ արտասանությունից:

Առաջին կամ «ի» (ը) հոլովում. հոլովիչն է «ի» (ը): Սա համապատասխանում է ընդհանուր հայերենի «ի» հոլովիչին: Այս հոլովման ի տարբերակին են պատկանում «թեթե» արմատական ձայնավորներ ունեցող գոյականները. օրինակ՝

էնգիզի զարուղը հաստ ա «ընկույզի կեղևը հաստ է»:

Ծիծիրին բօյու կարճ ա «քրոջ հասակը կարճ է»:

Առաջին հոլովման ը տարբերակով են հոլովվում գերազանցապես արմատական «ծանր» ձայնավորներ ունեցող բառերը. օրինակ՝ հացըն ճօթանքը ֆրհաքէ. «հացի կտորները հավաքիր»:

Եւկրօղ կսւմ «ու» հոլովում. հոլովիչն է «ու»: Սա ևս համապատասխանում է ընդհանուր հայերենի «ու» հոլովիչին: Այս հոլովմանն են պատկանում հոգնակի թվի բոլոր գոյականները (բացառությամբ «ց» հոլովման պատկանողներից), ինչպես նաև եզակի թվի ի, ու, ա ձայնավորներով և վ ձայնորդով վերջավորող (արե, հավ, կավ, նավ) գոյականները. օրինակ՝ ի քուն տուրը պէց ա «այգու դուռը բաց է»: Կ'ինուն համը լէվ ա «գինու համը լավ է»: Էրէվանցու

լիզուն հասկանում էմ «Երևանցու լեզուն հասկանում եմ»: Հավուն իբիկր մօ-վացել ա «հավի կատարը կապտել է»:

Մանթություն: Այս ձայնավորով վերջավորվող բառերը նույնպես «ու» հո-լովիչն են ստանում: Հնարավոր հորանջից խուսափելու համար կրկնակ ու-երի միջև արտասանվում է վ-ն. օրինակ՝ ծովու ղարուղ «ծվի կճեպ»: Կատուվու վօննէրը պիտիկ ա «կատվի ոտները պստիկ են»:

Երբորդ կամ «օշ» հոլովում. հոլովիչն է «օշ»: Այս հոլովիչը համապատաս-խանում է ընդհանուր հայերենի «ոջ» հոլովիչին: Այս հոլովմանն են պատկա-նում խիստ սահմանափակ թվով բառեր (ընդամենը 4 գոյական). տալ, տէր, ինդէր, տանըտէր: Օրինակ՝ Տալօշ տանէն ա կ'էլիս «տալօշ տնից է գալիս»:

Չորբորդ կամ «օր» հոլովում. հոլովիչն է «օր», որն համապատասխանում է «որ» հոլովիչին: Այս հոլովմանն են պատկանում ընտանիքի անդամներ և բա-րեկամություն ցույց տվող սահմանափակ թվով բառեր, դրանք են՝ ախպէր «եղբայր», քիր «քույր», իսկիսուր «կեսուր», տէքրը «տայգր». ընդամենը 4 բառ: Օրինակ.

Մարյանը քիվօր շօրէրն ա հաքիլ: «Մարիամը քրոջ շորերն է հաղել»:

Ախպօր անրմը Հափէտ ա: «Եղբոր անունը Հայրապետ է»:

Հինգերորդ կամ «վա» հոլովում. հոլովիչն է «վա»: Սա նույնպես համա-պատասխանում է ընդհանուր հայերենի «վա» հոլովիչին. այս հոլովմամբ հո-լովվում են ժամանակ ցույց տվող բառերը. օրինակ՝ քըշէր «գիշեր», ցէրէկ «ցերեկ», էրէկ «երեկ», կէսօր «կեսօր», ըռավօտ «առավոտ», աշունք «աշուն», կ'էրունք «գարուն» և այլն:

Վեցերորդ կամ «ան» հոլովում. հոլովիչն է «ան»: Այս հոլովմանն են պատկանում դրաբարյան վերջնահանգ և ունեցող բառերից թոռն>թօռ, լեռն>լէռ, ձեռն>ձէռ, դուռն>տուռ, գառն>կ'էր, կուռն>կուռ բառերը, որոնց հավելվածական ն-ն հանդես է գալիս հոլովիչից առաջ. օրինակ՝

Թօրնան իրէսը սիպտէկ ա «թոռան երեսը սպիտակ է»:

Տրրնան յէրիշքէն յանց կացա «դռան առջևից անցա»:

Մանթություն: Գրաբարյան ա ներդրական հոլովման պատկանող շուն-շան, տուն-տուն բառերը թե՛ «ի» հոլովմամբ են հոլովվում, թե՛ այս:

Յոթերորդ կամ «ց» հոլովում. հոլովիչն է «ց»: Համապատասխանում է ընդ-հանուր հայերենի «ց» հոլովիչին: Այս հոլովմանն են պատկանում հավաքական բարեկամություն ցույց տվող անեզական բառերը: «Յ» հոլովման պատկանող գոյականները ուղղականում ունենում են անհ կամ էնհ հոգնակերտ մասնիկը: Այս հոլովման պատկանող եզակի թվով գոյականներ չկան և հետևաբար ց-ն միայն հոգնակի թվի հոլովակազմիչ է:

Յ հոլովման պատկանող գոյականները ուղղական ձևով շատ սակավ են օգտագործվում և կամ ունեն կրկնակի հոգնակերտներ, օրինակ՝ ախշիկ>ախ-շրկէրք (էր+ք) կամ ախշրկերանք, սեռական՝ ախշրկերանց, տրղա>տրղէրք>տրղէրանց, թօռ>թօրնէր—թօրնէրանք, սեռական՝ թօրնէրանց և այլն: Հա-տուկ անուններից կազմված հոգնակիները, որոնք գերդաստան են նշանա-կում, նույնպես այս հոլովմանն են պատկանում, օրինակ՝ Հաջակօփէնց բեգի-րը խրրում ա «Հաջի Հակոբենց ձին խրխնջում է»:

Ի մի բերելով բուրգուրի բարբառի 7 հոլովումները, գալիս ենք այն եզրա-կացություն, որ դրանցից մի մասը խիստ սահմանափակ կիրառություն ունի

(օրինակ՝ «օշ» հոլովմամբ մնացել է 4 բառ, «օր» հոլովմամբ՝ 4 բառ, «վա» հոլովմամբ՝ մոտ 15 բառ, «ան» հոլովմամբ՝ մոտ 10 բառ), դրան հակառակ ուժեղացել են մյուս հոլովումները, օրինակ՝ «ու»-ն և «ի»-ն և ձեռք բերել ամենագործուն արժեք՝ իրենց ենթարկելով նախկինում այլ հոլովմամբ թեքվող գոյականներից շատերին. օրինակ՝ «վա» հոլովման պատկանող ժամանակ ցույց տվող բառերից շատերը որոշյալ առմամբ թեքվում են նաև «ու» հոլովմամբ:

Ամիս-ամսովա կամ՝ ամսուն, շափաթ-շէփթրվա կամ՝ շէփթուն, և այլն:

Կամ՝ ութէն<ութին ածանցով կազմված գոյականները առանց խտրության պատկանում են «ի» հոլովման, սակայն մեր գրի առած և ձայնագրած տեքստերում հանդիպում ենք նաև առանձին «ու» հոլովման ենթարկված ձևերի. օրինակ՝ Դէյդէյիս ուվէն օքուդութէնուն հրմար իմ սիրում «քեռուս իր լավության համար եմ սիրում»: Մինչդեռ պիտի լիներ «օքուդութէնի» և այսպես շատ «շեղումների» օրինակներ կարելի է բերել մյուս հոլովումներին պատկանող գոյականներից, որոնք թեև սեռականում այլ հոլովման են պատկանում, սակայն տրականում կամ բացառականում ենթարկված են արդեն այլ հոլովման:

Կառն>կ'էր, թօռն>թօռ և հավելվածական և ունեցող բառերի մեծ մասը, ինչպես նաև շուն, տուն բառերը, որոնք «ան» հոլովման են պատկանում, հանդիպում են թե՛ «ու», թե՛ «ի» հոլովմամբ. օրինակ՝ էս շունու իզ ա սա շան հետք է»: Կամ՝ էս շունի իզ ա սա շան հետք է»: էս կ'էրնան պիրթ ա սա ոչխարի բուրդ է»: Կամ՝ էս կ'էրի պիրթ ա սա ոչխարի բուրդ է» և այլն:

ԴԵՐԱՆՈՒՆ

Թուրդուրի բարբառում առկա են ընդհանուր հայերենի բոլոր դերանունները: Նույնիսկ պահպանվել են երկու հարցական դերանուններ՝ է՞ր «ինչի՞» և ի՞վ «ո՞ւր», «ինչօ՞վ», որոնք ակադեմիկոս Հ. Աճառյանի վկայությամբ նախագրաբարյան ը հարցական դերանվան սեռական և գործիական հոլովների քարացած ձևերն են²:

Անձնական դերանուններն են՝ ես>յէս, դու>տու, տուն, էն, մենք>մէնք, դուք>տուք, էնդուտնք, ընդուտնք, ոնդոնք:

Հատկապես շատ են առատ ցուցական դերանունները, որոնց տարբերակների առաջացումը պայմանավորված է դիմորոշ ս, ո, և հնչյուններից առաջ և հետո ձայնավորների կրած (նախապես այ երկբարբառից առաջացած) փոփոխություններով և այլ հնչյունների հավելումով. օրինակ՝ այս>էս, այգ>էտ, այն>էն, իսկ դրանցից առաջացած հոգնակի ցուցականները հանդես են գալիս բառասկզբի ձայնավորների փոխանցմամբ՝ էստանք-ըստրանք-իստրանք, էդրանք-ըդրանք, էնդրանք-ընդրանք-ինդրանք և այլն:

Ցուցական դերանուններից և տեղ, ձև, շափ, ժամանակ նշանակող բառերից բաղադրված ձևերը մակբայական լայն կիրառում ունեն, օրինակ, տեղ ցույց տվողներ՝ ըստէ, ըտտէ, ընդէ, էստի, էտդի, էնդի, իստէ, ինդէ և այլն:

Իսկ ձև մատնացույց անողները, որ կազմված են էս, էդ, էն ցուցականներից ու հանց (=պէս) բառից, կրել են հետևյալ փոփոխությունները.

² Տե՛ս Հ. Աճառյան, ԼժՀ, հատոր 11, էջ 390:

ըսէհէնց,	ըտէհէնց,	ընէհէնց
իսէհէնց,	իտէհէնց,	ինէհէնց
իստէհէնց,	—	ինդէհէնց
սըհէնց,	տըհէնց,	նըհէնց
սէհէնց,	տէհէնց,	նէհէնց
սէնց,	տէնց,	նէնց
ըտէնց,	ըտէնց,	ընէնց և այլն

Կա և ճէնց ձևը, որը թվում է անդեմ՝ ս, դ, և դիմորոշ հնչյունների բացա-
կայություն պատճառով, սակայն օդատարածվելով սթանդակ բայի III դեմքի
հետ դառնում է III դեմքի ցուցական. օրինակ՝

— Ծառէն վէր յէկ, թէ վօշ թակօլում «ծառից վայր իջիր, թե չէ կծեծեմ»:

— Հէնց ի, դէ, հէնց ա, վէր շիմ կ'էլու: «Որ այդպես է չեմ իջնելու»:

Ստացական դերանուններն են՝ իմ, քու, բնդա, ու վէն, մէր, ծէր, բնդ-
րանց, ուրանց, ուլանց և այլն:

Հարցական դերանուններն են՝ վօնց, ինչ, վօր, էր, «ինչի» քանը «քանի»,
իշքէր «ինչափ», ի՞վ («ուր», «ինչ» իմաստով) և խի, որն առաջացել է գրա-
բարյան ի շքացած հարցականից իս-ի հավելումով:

Որոշյալ դերանուններն են՝ փրթավը «բոլորը», ամէնը, ամէնքը, ժխտման
դերանուններն են՝ օնջով «ոչ ոք», ճէշմի «ոչ մի», վօշ մին «ոչ մեկը»: Անորոշ
դերանուններն են մի, մին, էնմին, մինօնֆ, էնմինօնֆ:

ԴԵՐԲԱՅՆԵՐ

Բուրգուրի բարբառում առկա են ընդհանուր հայերենի բոլոր յոթ դերբայ-
ները իրենց համապատասխան վերջավորություններով. անորոշ՝ իլ (էլ) ալ,
անկատար՝ ում (իմ, ըմ), ապառնի՝ լու, լի, վաղակատար՝ էլ, ացէլ, հարակա-
կատար՝ ած, ացած, ենթակայական՝ օղ, ացօղ, ժխտման՝ ի, ա: Ինչպես նաև
մակբայական կամ ընթացակցական դերբայը, որ ձևավորվում է էն մասնիկով:

Անորոշ դերբայ: Գրաբարյան շորս լծորդությունները Բուրգուրի բարբա-
ռում վեր են ածվել երկուսի՝ իլ (էլ) ալ: Ըստ որում իլ և էլ լծորդության բայերը
նույնացել են և անորոշում ունեն բացառապես իլ վերջավորություն, սակայն
եղանակային որոշ ձևերում խոնարհվում են իբրև էլ լծորդության բայեր. օրի-
նակ՝ հրամայական եղանակում՝ կ'ի'րէ — կ'ի'րէ'ցէք ըղձականի երրորդ դեմ-
քում՝ կ'ի'րիմ, կ'ի'րիս, կ'ի'րէ, վաղակատարում՝ կ'ի'րէլ, կարթացէլ իմ և այլն:

Ալ լծորդության պատկանող բայերի մեծ մասը բնածայնական են կամ
բայարմատների կրկնությամբ կաղմված շեղոք սեռի բայեր են. օրինակ՝ ճըր-
ճըրալ «ճռճռալ», ծըծաղալ «ծիծաղել», ֆօդֆօդալ «հոտոտել», իրէվալ «երե-
վալ» և այլն:

Անորոշ դերբայը եղանակային ձևերի կաղմությանը չի մասնակցում, բա-
ղառությամբ արգելական հրամայական եղակի թվից. օրինակ. կ'ի'րիլ մը «մի
գրիր»:

Հակառակ դրան, մեծ է անորոշ դերբայի մակբայական կիրառությունը,
որն իբրև այդպիսին կարող է դրսևորվել տարբեր հոլովներով կամ իրեն կցված
մասնիկներով:

Անորոշ դերբայի տրական հոլովը պէսդան (բաղադրված է հայերեն պէս և
փոխառյալ դան՝ (dan) մասնիկից) բառի հետ հարադրվելով ցույց է տալիս

նախադասության հիմնական գործողությանն անմիջապես նախորդող մեկ այլ գործողություն, որը երբեմն հիմնական գործողության սկսելու պատճառն է դառնում:

Օրինակ՝ Վափօրը կաննելուն պէսդան մէնք վէր յէկանք «շոգենալը (կամ զնացքը) կանդնելուն պես մենք ցած իջանք»:

Ըխէն շունու տէսնելուն պէսդան լէցավ «երեխան շունը տեսնելուն պես լացեց»:

Փոխառյալ իմէն (iken) մասնիկը կցվելով անորոշ դերբային նրան հաղորդում է մակբայական իմաստ, որը ցույց է տալիս նախադասության ենթակայի հիմնական գործողությանը զուգահեռ մի այլ գործողություն. օրինակ՝

Սօխախէն յանց կէնալիմէն ախաօրրս տէսա «փողոցից անցնելիս տեսա եղբորս»:

Կ իր կ'իւելիմէն հէլուս հիշէյի «նամակ գրելիս մորս հիշեցի»: Սա համապատասխանում է արդի հայերենի անկատար դերբայի երկրորդ տարբերակով (ելիս, ալիս) կազմվող ժամանակի պարագաներին:

Անորոշ դերբայի գործիական հոլովը դառնում է ձևի պարագա. օրինակ՝ կ'իրէլօվ ա մարթ թէոցէլ «գրելով է մարդ դարձել»:

Անկատար դերբայը ունի երկու վերջավորություն՝ ում (ըմ, իմ) և լիս: Սա մասնակցում է սահմանական եղանակի ներկա և անկատար ժամանակների կազմությանը, ինչպես նաև անորոշ դերբայի պես կարող է իմէն (iken) մասնիկի հետ բաղադրվելով մակբայական կիրառություն գտնել. օրինակ՝ տունն էլիսիմէն ճիճիրիս տէսա «տուն դնալիս քողջ տեսա»:

Նույնը կարող է կազմվել նաև առաջին տարբերակով. օրինակ՝ Շօրէրրս վիլէնումիմէն քեզ տէսա «շորերս լվալիս քեզ տեսա»:

Ասյառնի դերբայը, ինչպես նշել ենք, հանդես է գալիս երկու՝ լու և լի տարբերակներով. սրոնցից լու վերջավորությամբ ապառնին մասնակցում է սահմանական եղանակի ապառնի ժամանակների կազմությանը, մինչդեռ լի տարբերակը ունի միայն շարահյուսական արժեք և հանդես է գալիս նախադասության մեջ իբրև որոշիչ, կապի խնդիր և ստորոգելիական վերադիր. օրինակ՝

էս ուտէլի ճէշ ա: «սա ուտելու ճաշ է»: Այստեղ «ուտելի»-ն որոշիչ է:

էս ճէշն ուտէլի յա «այս ճաշն ուտելու ճաշ է»: Այստեղ ստորոգելիական վերադիր է:

Յէս ճէշը ուտօլում (կամ ուտօլու վէմ) «ես ուտելու եմ ճաշը» ապառնի է: Նույնը և անորոշ առմամբ և օժանդակ բայի նախադաս կիրառմամբ. օրինակ՝ Յէս ճէշը ուտօլու «ես ճաշ եմ ուտելու»: Այստեղ ուտելու դերբայը նույնպես սահմանականի ապառնի ժամանակով է տրված:

Ուտէլի մահար նէցա տուն «ուտելու համար դնացի տուն»: Այստեղ ուտելի ապառնին կապի խնդիր է:

Վաղակատար դերբայն ունի էլ և ացէլ վերջավորությունները: Իլ (էլ) լծորդության բայերի վաղակատարը կազմվում է ներկայի հիմքից և ունենում է էլ, իսկ ան, են, սոսկածանցավորների և ալ լծորդության բայերի վաղակատարը կազմվում է անցյալի հիմքից և ունենում է ացէլ վերջավորությունը:

Ի լծորդության բայերի օրինակներ՝
անորոշ՝ կ'իրիլ, խօսիլ, պիրիլ, փրոնիլ, կաննիլ. վաղակատար՝ կ'իրէլ, խօսէլ, պիրէլ, փրոնէլ, կաննէլ:

Ալ լծորդության և էն, ան սոսկածանց ունեցող բայերի օրինակներ՝

անորոշ՝ կարթալ, խաղալ, պարծանալ, քիթանալ, մօտանալ. վաղակատար՝ կարթացել, խաղացել, պարծացել, քիթացել, մօտացել և այլն:

Վաղակատար դերբայը մասնակցում է սահմանական եղանակի ժամանակների կազմությանը: Օրինակ՝

Աներմըս էլ եմ մըրացել «անունս էլ եմ մոռացել»:

Հարակատար դերբայն ունենում է ած, ացած վերջավորությունը. վերջինս ալ լծորդության և ան, էն սոսկածանց ունեցողներին է: Հարակատար դերբայը հարադրվելով օժանդակ բայերի հետ՝ կազմում է սահմանական եղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակները: Հարակատար դերբայը դրվելով գոյականից առաջ նախադասության մեջ կատարում է որոշիչ պաշտոն: Օրինակ՝

Քիթացած հարսնաթուլըս լիվն ա «գտածս հարսնաքողը լավն է»:

Ենթակայական դերբայն ունի օղ, ացօղ վերջավորությունները, որը կազմվում է նույն հիմունքներով, ինչ հիմունքներով վաղակատար և հարակատար դերբայներն՝ էին կազմվում՝ էլ լծորդության բայերը՝ ներկայի հիմքից, ալ լծորդության և էն, ան սոսկածանցավորները՝ անցյալի հիմքից: Ենթակայական դերբայը բայի եղանակային կազմությանը չի մասնակցում և նրա կիրառումը նույն արդի հայերենի պես է, այսինքն՝ դառնում է որոշիչ, ստորոգելիական վերադիր և այլն: Օրինակ.

էրկըս պիւօղ ա «ամուսինս լերող է» (ստորոգելիական վերադիր):

Ածօղ հավը ծէն ա ածրմ «ածող հավը կշկշում է» (որոշիչ):

Ըղծական կամ ժխտման դերբայն ունի է (ի) կամ ա վերջավորությունը: Այս դերբայը մասնակցում է ըղծական, պայմանական և հարկադրական եղանակների, ինչպես նաև նրանց ժխտական ձևերի կազմությանը: Ըղծականից է կազմվում նաև արգելական հրամայականի հոգնակին. օրինակ՝ կիրիք վօշ, հաքնիք վօշ:

Մակբայական կամ ընթացակցական դերբայը բայական ժամանակների կազմությանը չի մասնակցում և ունի միայն մակբայական կիրառություն. օրինակ՝

Հէքէթ անէլէն իքին ինք կ'էլիս «զրուցելով գալիս էինք այգին»:

Աշշին ֆոդֆոդէլէն կիկիշտանա «հոհարարը հոտոտելով կկշտանա»:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բուրգուրի բարբառի բայական եղանակներն ու ժամանակներն ընդհանրապես համապատասխանում են ընդհանուր հայերենին: Սակայն որոշ ձևերի կազմության մեջ և մասնավորապես սահմանական եղանակի անցյալի ձևերում հրամայականի եզակիում, արգելականում կամ ըղծականի, պայմանականի, հարկադրականի անցյալի ձևերում ի հայտ են գալիս այն տարբերությունները, որոնք էլ կազմում են բարբառի խոնարհման սիստեմի առանձնահատկությունները: Սահմանական եղանակի 8 ժամանակները բաղադրվում են օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար ժամանակներով: Օժանդակ բայի խոնարհումը դրսևորվում է երեք շարքով՝ բացառությամբ եզակի երրորդ դեմքի ներկա ժամանակի, որը միշտ մնում է ա:

Օժանդակ բայի երեք շարքը պայմանավորված է ինչպես նրա նախադաս կիրառմամբ, այնպես էլ բաղադրվող դերբայի կազմության մեջ հանդես եկող

«ծանր» կամ «թեթև» ձայնավորների առկայությամբ: Ահա օժանդակ բայի խոնարհման տեսքը իր երեք շարքերով՝

ն ե ռ կ ա

եմ>էմ-ըմ-իմ

ես>էս-ըս-իս

է>ա - -

ենք>էնք-ընք-ինք

էք>էք-ըք-իք

էն>էն-ըն-ին

Օժանդակ բայի անցյալ անկատարը դրսևորվում է երկու ձևով՝ պարզ և բաղադրյալ. պարզ կամ բուն անցյալ անկատարը ունի հետևյալ տեսքը՝

անցյալ անկատար

էի>ի

էիր>իր

էր>եր

էանք>ինք

էաք>իք

էին>ին

Բաղադրյալ անցյալ անկատարը կազմվում է օժանդակ բայի ներկայից և փոխառյալ իդի (idi) մասնիկի բաղադրումից. օրինակ՝

էմ-ըմ-իմ իդի էնք-ընք-ինք իդի

էս-ըս-իս իդի էք-ըք-իք իդի

ա — — իդի էն-ըն-ին իդի

Երբ համեմատում ենք օժանդակ բայի ներկայի և անցյալ անկատարի ձևավորը, նկատում ենք, որ հոգնակի թվում օժանդակ բայի երրորդ տարբերակները միմյանցից զանազանել հնարավոր չէ: Հավանաբար հնարավոր թյուրիմացություններին խուսափելու համար էլ բարբառն ստեղծել է մի նոր միջոց. փոխառյալ իդի մասնիկը ավելացնելով անցյալի ձևերի վրա կամ ուղղակի ներկայի վրա, լուծել է երկու ժամանակների շփոթության հարցը:

Ահմանական եղանակ: Սահմանական եղանակի ներկան բաղադրվում է «ըմ», «իմ» կամ «ում» վերջավորությամբ անկատար դիրքային և օժանդակ բայի ներկայից, որոնց ձայնավորները ինչպես նշել ենք գտնվում են փոխադարձ կախման մեջ:

Ներկա կ'իրում ըմ-ըս-ա, ընք-ըք-ըն

կարթում ըմ-ըս-ա, ընք-ըք-ըն

Իսկ եթե անկատարի «ում» վերջավորությունը ընդունում է «ըմ» տեսքը, ապա օժանդակ բայը հանդես է գալիս մյուս տարբերակով. օրինակ.

կ'իրում էմ-էս-ա, էնք-էք-էն

կարթում էմ-էս-ա, էնք-էք-էն

Եթե օժանդակ բայը նախադաս է, ապա մեծ մասամբ էմ, էս, ա տարբերակով է հանդես գալիս. օրինակ՝ Յէս էմ կ'իրում «ես եմ գրում»:

Ահմանական եղանակի անցյալ անկատարը, ինչպես և բոլոր անցյալ ժամանակները, ունի երկու ձև, մեկը բաղադրվում է օժանդակ բայի անցյալ ան-

կատարով, մյուսը՝ օժանդակ բայի ներկայով, ու «իդի» մասնիկով. օրինակ՝ Առաջին ձև՝

կ'իրում ի-իր-էր ինք-իք-ին
կարթում ի-իր-էր ինք-իք-ին

Ծրկրորդ ձև՝

կյիրում ըմ իդի-ըս իդի-էր իդի, ընք իդի-ըք իդի-ըն իդի
կարթում իմ իդի-իս իդի-էր իդի, ինք իդի-իք իդի-ին իդի

Սահմանական եղանակի ապառնի ժամանակը կազմվում է «լու» վերջավորությունից ապառնի դերբայից և օժանդակ բայի ներկայից: Հենց այստեղ էլ երևան է գալիս ապառնի դերբայի երկու զուգաձևերի՝ «լի» և «լու» վերջավորությունների, իմաստային տարբերությունները: «լի» վերջավորություն ունեցող ապառնին մանաւրէձ կապի հետ օգտագործվում է իբրև նպատակի պարագա, որոշիչ և այլն: Օրինակ՝ խօսէլի մահար յէկա «խոսելու համար եկա»: Իսկ «լու» վերջավորությունից ապառնին սահմանականի ապառնի ժամանակների համար: Ետևած անունովից «լի» լծորդության բայերի «է» ձայնավորը վեր է ածվում «օ»-ի՝ լու վերջավորության ու՝ ձայնավորի ազդեցությամբ: Իսկ դերբայական վերջավորության և օժանդակ բայերի միջև հորանջը ծածկելու նպատակով հանդես է գալիս վ՝ ձայնորդը. օրինակ՝

գրելու եմ > կ'իրօլու վէմ-վէս-վա, վէնք-վէք-վէն
կարթալու եմ > կարթալու վէմ-վէս-վա-վէնք-վէք-վէն:

Ավելի հաճախ օգտագործվում է ապառնու մյուս տարբերակը, ուր արագաբանության պատճառով սղվում են օժանդակ բայերի ձայնավորները և մնացած մ, ս, ա, ի, ք, ք, ն դիմորոշ բաղաձայնները կցվում են ուղղակի ապառնի դերբային. օրինակ՝

գրելու եմ > կ'իրօլում-կ'իրօլուս-կ'իրօլու վա, կ'իրօլունք,

կարթալու եմ > կարթալում-կարթալուս-կարթալու վա, կարթալունք-կարթալուս-լուք-կարթալուն:

Անցյալ ապառնին, սահմանականի մյուս ապառնիների նման, նույնպես ունի երկու տարբերակ. մեկն օժանդակ բայի անցյալով, մյուսն՝ իդի մասնիկով ու օժանդակ բայի ներկայով. օրինակ՝

առաջին ձև՝ կ'իրօլու վի-վիր-վէր-վինք-վիք-վին
կարթալու վի-վիր-վէր-վինք-վիք-վին:

Ծրկրորդ ձև՝ կ'իրօլում իդի, կ'իրօլուս իդի, կ'իրօլու վա իդի
կիրօլունք իդի, կ'իրօլուք իդի, կիրօլուն իդի:

կարթալում իդի, կարթալուս իդի, կարթալու վա իդի, կարթալունք իդի, կարթալուք իդի, կարթալուն իդի:

Վաղակատարը ունի հետևյալ տեսքը՝

կ'իրէլ իմ-իս-ա, ինք-իք-ին
կարթացէլ իմ-իս-ա, ինք-իք-ին:

Անցյալ վաղակատար առաջին ձևը լինում է այսպես՝ էլ լծորդության բայերն ունենում են էլ վերջավորությունը, իսկ ալ լծորդության բայերը և ան, էն սոսկածանց ունեցողները՝ աց էլ վերջավորությունը. օրինակ՝ առաջին ձև.

կ'իրէլ ի-իր-էր, ինք-իք-ին
կարթացէլ ի-իր-էր, ինք-իք-ին
պարծացէլ ի-իր-էր, ինք-իք-ին:

Երկրորդ ձև՝ կ'էրէլ իմ իղի-իս իղի-էր իղի, ինք իղի-իք իղի-ին իղի:

Հարակատար ժամանակը կազմվում է ած, ացած վերջավորությունն ունեցող հարակատար դերբայից և օժանդակ բայի ներկայից. օրինակ՝

կ'իրած ըմ-ըս-ա, ընք-ըք-ըն
կարթացած իմ-ըս-ա, ընք-ըք-ըն:

Հարակատար անցյալը նույնպես երկու ձևով է կազմվում՝ օժանդակ բայի անցյալով և իղի-ով ու օժանդակ բայի ներկայով.

կ'իրած ըմ իղի-ըս իղի-էր իղի, ընք իղի-ըք իղի-ըն իղի
կամ՝ կ'իրած ի-իր-էր, ինք-ին-ին:

Անցյալ կատարյալը պարզ ժամանակ է և ունի մեկ ձև՝ ք-ըք-էց, կամ՝ աց, ընք-ըք-ըն վերջավորություններով, օրինակ՝

կ'իրէցի, կ'իրէցր, կ'իրէց, կ'իրէցընք, կ'իրէցըք, կ'իրէցըն, կարթացր, կարթացրր, կարթաց, կարթացընք, կարթացըք, կարթացըն: Սոսկածանցավոր բայերի անցյալ կատարյալը ունենում է ա. առ, ալ, անք, աք, ան վերջավորությունները. օրինակ՝ պարծացա, պարծացար, պարծացավ, պարծացանք, պարծացաք, պարծացան, հասա, հասար, հասավ, հասանք, հասաք, հասան:

Հրամայական եղանակի եզակի թվում ալ լծորդության պարզ բայերը նման են դրականին և ունեն «ա» վերջավորությունը, էլ լծորդության բայերը՝ է, իսկ սոսկածանցավորները՝ իր. օրինակ՝ կարթա, խաղա, կ'իրէ, խօսէ, բիթացիր (դտիր), պարծացիր:

ՄԱԿՐԱՅՆԵՐ

Տոկոսային հարաբերությամբ փոխառություններից մեծ բաժին է ընկնում մակբայներին և ընդհանրապես շթեքվող ձևերին. նույնիսկ փոխառյալ ձևերի համաբանությամբ ստեղծվում են մակբայակերտ ածանցներ, օրինակ՝ փոխառյալ բիրդան (birdan) «մեկից», «հանկարծակի» ձևի անալոգիայով ստեղծվել է պէսդան «հենց որ», «պէս» ոճը: Իսկ շատ դեպքերում էլ դեն է գցվել դան, դէն բացառական վերջավորությունը և բառը «հայացվել» է, օրինակ՝ էրքէն բունդար նէցի «վաղ առավոտյան աղբյուր դնացի»: Էվէլին սէնց էր, «առաջներում այսպես էր»: Ղարշուվուն թրրացին նէցավ «դիմացի հարևանը դնաց»: Հազրր յէս ի ըլէլ «թող ես լինեի»:

Ընդհանրապես «ի»-ն հանդես է գալիս մակբայակերտի դերում և տարբեր խոսքի մասերից կազմում է մակբայական ձևեր: Օրինակ՝ հավա բառը օգտագործվում է «եղանակ», «օղ» նշանակությամբ, սակայն ստանալով «ի» վերջա-

վորությունը վեր է ածվում մակբայի՝ նշանակելով «իզուր», օրինակ՝ հավայի հէքէթ րս անում «իզուր ես զրուցում, խոսում»։ Նույնը և վերոհիշյալ հազրր «պատրաստ» բառը, որ հազրի ձևով այլ իմաստ ունի։ Այդպես է նաև պատ բառից առաջացած պատտի-պատտի ձևը, որ նշանակում է «խարխափելով», ինչպես նաև էսօր-բսօրի, էրէկ-էրէկի, էլ-էլի (էլր) «նորից» և նման այլ բառեր։

Որոշ առանձնահատկություններ են դրսևորվում նաև կապերի, շաղկապների և ձայնարկությունների մեջ, որոնցից կարելի է նշել մի շարք «մաշված» կոչականներ, որոնք վեր են ածվել ձայնարկությունների՝ արագասության պատճառով, օրինակ՝ «աֆի» կամ «աֆ», սա օգտագործում են կանայք միմյանց դիմելիս։ Առաջին ձևը հուշում է, որ այն առաջացել է «այ ֆի» կապակցության «մաշվելուց», որ թելադրված է արագասությամբ։ Նույն ձևով առաջացել է «աշի» ձևը «ախիկ» կամ «այ ախիկ» ձևից, «ակ»-ը «այ կին» ձևից և այլն։

Իհարկե, Բուրդուրի ձևաբանական բոլոր առանձնահատկությունները հնարավոր չէր ներկայացնել մի հոդվածի սահմաններում։ Մեր նպատակն էր համառոտակի նկարագրել միայն նրա բնորոշ ու հիմնական օրինաչափությունները։

Н. А. МКРТЧЯН

МОРФОЛОГИЯ БУРДУРСКОГО ДИАЛЕКТА АРМЯНСКОГО ЯЗЫКА

Р е з ю м е

Статья посвящена описанию морфологических особенностей бурдурского диалекта, вкратце излагаются основные черты спряжений и склонений данного диалекта, а также некоторые особенности неизменяемых частей речи.

Будучи диалектом ветви «пид», в силу исторических обстоятельств, бурдурский диалект попал в среду диалектов ветви «лр» на западе Анатолии, что и наложило отпечаток на морфологические закономерности указанного диалекта.

Бурдурский диалект—один из неизученных диалектов армянского языка, и в данной статье впервые описывается его морфология, что дает возможность проследить эволюцию армянских диалектов в новой среде и возникновение новых закономерностей в течении последних 350 лет—в сравнении с прежними соседними сюник-карабахскими диалектами.

Интересно образование прошедшего времени, которое образуется с помощью частицы «իդի», которая в данной форме не встречается в сюник-карабахском диалекте.